



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 188 - Ա

29 մայիսի 2019 թ.

**ՎԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանի 2019 թվականի մայիսի 23-ի N Ն/1497-2019 ցեկուցագիրը

կարգադրում եմ՝

1. Հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքի կատարման համար՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» (4111) տնտեսագիտական դասակարգման հոդվածի տնտեսված միջոցների հաշվին պարգևատրել իր մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի հիսուն տոկոսի չափով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումները:

29.05.2019

  
 \_\_\_\_\_  
 ՄԱՐԶՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան  
 Հասցե: ՍԱՆՍՅԱՆ ԳՆԵԼ 1710830069  
 Հեռախոս: 08404767

**Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**  
 ք. Գավառ